

**«ԳՈՒՂԿՐԵՂԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ**

«ԳՈՒՂԿՐԵՂԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն /նախկինում՝ «ԱՎԱՆԳԱՐԴ ԻՆՎԵՍՏ» ՈՒՎԿ ՓԲԸ/ վերանվանվել է 03.02.2012թ.-ին:

«ԳՈՒՂԿՐԵՂԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն համաձայն իր քաղաքականության տրամադրում է առևտրային, սպառողական վարկեր և երաշխիքներ: Վարկի մարումը և տոկոսների վճարումը կատարվում է համաձայն պայմանագրի ժամանակացույցի: Առևտրային և ֆիզիկական անձանց տրամադրվող սպառողական վարկերը, երաշխիքները տրամադրվում են համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի և Ընկերության համապատասխան իրավական ակտերի: Վերոնշյալ վարկերի վարկավորման պայմանները ներկայացվում են ստորև:

**Սպառողական վարկերի տրամադրման պայմաններ**

	<b><u>Առանց գրավի ապահովվածության սպառողական վարկեր</u></b>	<b><u>Գրավի ապահովվածությամբ սպառողական վարկեր</u></b>
Արժույթը	ՀՀ դրամ	ՀՀ դրամ
Վարկի գումարը	50,000 ՀՀ դրամ-2,000,000 ՀՀ դրամ	50,000 ՀՀ դրամ-30,000,000 ՀՀ դրամ
Վարկի տևողությունը	1-18 ամիս	1-36 ամիս
Վարկի տարեկան տոկոսադրույքը	24%	24%
Վարկի տրամադրման վճար (միանվագ)	3.5%	3%
Վարկի սպասարկման ամենամսյա վճար	1.1-1.3%	1-1.3%
Ապահովվածությունը	1-3 անձանց երաշխավորություն (վերոնշյալը չի վերաբերում ՈՒՎԿ հետ համագործակցող այն կազմակերպությունների աշխատակիցներին, որոնց հետ առկա է պայմանագիր, իրենց աշխատակիցներին վարկեր տրամադրելու վերաբերյալ):	Շարժական (ավտոմեքենա, սարքավորումներ՝ 3 մլն. դրամից ոչ պակաս արժեքով) և/կամ անշարժ (բնակարան, բնակելի տուն, այլ նշանակության շինություն, հող) գույք, երաշխավորություն:

**Առևտրային վարկերի տրամադրման պայմաններ**

	<b><u>ՀՀ դրամով բիզնես վարկեր</u></b>	<b><u>ԱՄՆ դոլարով կամ ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամով բիզնես վարկեր</u></b>	<b><u>Վարկեր առանց երաշխավորության և գրավի</u></b>
Վարկի գումարը	200,000 ՀՀ դրամ- 15,000,000 ՀՀ դրամ	500 ԱՄՆ դոլար կամ համարժեք ՀՀ դրամ- 40,000 ԱՄՆ դոլար կամ համարժեք ՀՀ դրամ,	200,000 ՀՀ դրամ- 600,000 ՀՀ դրամ
Վարկի տրամադրման վճար	3.5%-3.7%	1.5%-3%	4%
Տարեկան տոկոսադրույք	24%	18%-22%	24%
Սպասարկման ամենամսյա վճար	0%-1%	0%-0.8%	1.1%
Վարկի ժամկետը	3-24 ամիս	3-42 ամիս	3-12 ամիս
Արտոնյալ ժամկետ	0-4 ամիս	0-9 ամիս	0-1 ամիս

Ընկերության կողմից երաշխիք տրամադրվում է ռեզիդենտ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին՝ առավելագույնը 3,000,000 ՀՀ դրամի չափով, 24 ամիս ժամկետով և երաշխիքի գումարի 15%-ի չափով վարձավճարով:

Առևտրային վարկերի ապահովման միջոց են հանդիսանում երաշխավորությունը և/կամ գրավը՝ կախված գումարի մեծությունից՝ համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի և Ընկերության համապատասխան իրավական ակտերի: Ընկերությունը դադարեցրել է գյուղատնտեսական վարկերի տրամադրումը համաձայն 2015թ.-ի հունիսի 10-ի Խորհրդի թիվ 16 արձանագրության, «ԱՊՊԱ վարկ» սպառողական վարկատեսակի տրամադրումը 2016թ.-ի փետրվարի 10-ից, ինչպես նաև առանց գրավի և երաշխավորության վարկատեսակի տրամադրումը՝ անորոշ ժամկետով:

«ԳՈՒՂԿՐԵՂԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն իր կանոնադրության համաձայն հրապարակային օֆերտայի միջոցով չի ներգրավում փոխառություններ, հետևաբար, պահպանում է միայն «Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը» և «Ընդհանուր կապիտալի նվազագույն չափը» նորմատիվները: Հաշվետու եռամսյակի ընթացքում այդ նորմատիվների գծով խախտումներ չկան:

«ԳՈՒՂԿՐԵՂԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի աշխատողների բանակը հաշվետու եռամսյակի ընթացքում՝ 23 անձ:

«ԳՈՒՂԿՐԵՂԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից տրամադրվող վարկերի պայմանների մանրամասններին և 2016թ.-ի 1-ին եռամսյակի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթին կարող եք ծանոթանալ Ընկերության վեբ կայքում:

- Գործադիր տնօրեն
- Հասցե
- Հեռախոս
- Էլ. փոստ
- Վեբ կայք

Արտաշես Տոնոյան  
0069, Երևան, Կ.Ուլնեցու 58/1  
(+374)10 24 80 05  
info@goodcredit.am  
http://www.goodcredit.am

